

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հաճախորդներին պատկանող արժեթղթերի և դրամական միջոցների հետ կապված հաճախորդների շահերի պաշտպանության նպատակով ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր է.

1.1. պահպանել տեղեկատվություն, վարել այնպիսի հաշվառում և հաշիվներ, որոնք թույլ կտան ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր հաճախորդի միջոցները այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներից,

1.2. պահպանել տեղեկատվությունը և վարել հաշվառումն ու հաշիվներն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունն իր տիրապետմանը և(կամ) կառավարմանը հանձնված Հաճախորդի դրամական միջոցներին և արժեթղթերին,

1.3. պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ հաճախորդների միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև, որոնց մոտ պահվում են հաճախորդների միջոցները,

1.4. ապահովել, որ երրորդ անձի մոտ պահվող ցանկացած հաճախորդի արժեթղթերը հնարավոր է առանձնացնել ներդրումային ծառայություններ մատուցող անձին պատկանող արժեթղթերից, ինչպես նաև երրորդ անձի արժեթղթերից՝ արժեթղթերի հաշիվների տարբեր անվանմամբ կամ պաշտպանության համարժեք մակարդակ ապահովող այլ միջոցներով: Սույն կետով սահմանված պահանջը չի տարածվում Ընկերության կողմից իր հաճախորդին պատկանող պետական արժեթղթերը պետական պարտատոմսերի ենթապահառու հանդիսացող անձին փոխանցման դեպքի վրա, եթե պետական պարտատոմսերի ենթապահառուի մոտ ներդրումային ծառայություններ մատուցող անձի և նրա հաճախորդների արժեթղթերի համար առանձին (տարբեր անվանմամբ) հաշիվների բացումն անհնար է,

1.5. ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ Հաճախորդի միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում Հաճախորդի միջոցների կամ այդ միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար:

### ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՊԱՇՏԵԼԸ

2. Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի արժեթղթերը պահել հաճախորդի համար երրորդ անձի մոտ բացված հաշվում (հաշիվներում): Երրորդ անձանց ընտրության, նշանակման և երրորդ անձի և տվյալ արժեթղթերի պահառության գործընթացների պարբերական ուսումնասիրության հարցում Ընկերությունը պետք է գործի բարեխղճորեն,

լավագույն ջանքերի գործադրմամբ, բավարար ուշադրությամբ և հոգատարությամբ: Երրորդ անձանց ընտրության և նշանակման գործընթացում Ընկերությունը պետք է հաշվի առնի երրորդ անձի փորձառությունն ու համբավը, ինչպես նաև հաճախորդի արժեթղթերի պահառությանը վերաբերող իրավական պահանջները և գործարար շրջանառության սովորույթները՝ Հաճախորդի իրավունքների վրա դրանց բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով:

3. Եթե Ընկերությունը նախատեսում է պահել հաճախորդի արժեթղթերը երրորդ անձի մոտ, որի երկրում առկա են առանձնահատուկ պահանջներ և վերահսկողություն այլ անձանց պատկանող արժեթղթերի պահառության նկատմամբ, ապա Ընկերությունն իրավունք չունի պահել Հաճախորդի արժեթղթերը տվյալ երկրում գործող այնպիսի անձի մոտ, որը ենթակա չէ նման պահանջների կամ վերահսկողության:

4. Ընկերությունն իրավունք չունի պահել Հաճախորդի արժեթղթերը այլ երկրում գտնվող երրորդ անձի մոտ, որտեղ չի կարգավորվում այլ անձանց պատկանող արժեթղթերի պահառությունը, բացառությամբ՝ եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

4.1. արժեթղթերի կամ դրանց հետ կապված ներդրումային ծառայությունների բնույթը պահանջում է, որ այդ արժեթղթերը պահվեն տվյալ երկրում գտնվող անձի մոտ,

4.2. արժեթղթերը պատկանում են որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդին և Հաճախորդը Ընկերությանը տվել է գրավոր ցուցում կամ համաձայնություն իր արժեթղթերը տվյալ երկրում գտնվող անձի մոտ պահելու վերաբերյալ:

### ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

5. Ընկերությունը պարտավոր է պահել Հաճախորդի դրամական միջոցները որևէ առևտրային բանկում բացված մեկ կամ մի քանի հաշիվներում:

6. Ընկերությունը պարտավոր է իր սեփական և Հաճախորդի դրամական միջոցները պահել առանձին բանկային հաշիվներում:

7. Ընկերությունը Հաճախորդի դրամական միջոցները պահելու համար առևտրային բանկ ընտրելիս պետք է գործի բարեխղճորեն, բավարար ուշադրությամբ և հոգատարությամբ՝ ելնելով Հաճախորդի լավագույն շահերից: Ընկերությունը պետք է հաշվի առնի նման առևտրային բանկի փորձը և համբավը, վարկանիշը, ինչպես նաև հաճախորդների դրամական միջոցների պահպանության հետ կապված իրավական պահանջները և շուկայական պրակտիկան՝ Հաճախորդի իրավունքների անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու և Հաճախորդի իրավունքների վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով: Ընդ որում, եթե Ընկերությունը Հաճախորդի դրամական միջոցները պահելու համար ընտրում է արտասահմանյան բանկ, ապա Ընկերությունը պետք է ստանա Հաճախորդի գրավոր համաձայնությունը միջոցները տվյալ բանկում պահելու համար, բացառությամբ՝ եթե ընտրված արտասահմանյան բանկի վարկանիշը ցածր չէ Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-», Մուդիզի «Բաա» խմբի՝

«Բաա3», Ա.Մ. Բեստի «Բ» խմբի՝ «Բ+», Դաֆֆ և Ֆելիզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-», Վեիսսի «Բ» խմբի՝ «Բ-» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» վարկանիշից:

### ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

8. Ընկերությանն արգելվում է իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ Հաճախորդին պատկանող արժեթղթերով կամ այլ կերպ օգտագործել այդ արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, բացառությամբ 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի:

9. Ընկերությունը կարող է օգտագործել Հաճախորդի արժեթղթերը միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

9.1. Հաճախորդը նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը արժեթղթերի օգտագործման համար՝ մատնանշելով օգտագործման պայմանները,

9.2. Հաճախորդի արժեթղթերի օգտագործումը պետք է սահմանափակվի միայն հաճախորդի կողմից մատնանշված պայմաններով:

10. Ընկերությունը կարող է երրորդ անձի մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող՝ հաճախորդին պատկանող արժեթղթերով իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ կամ այլ կերպ օգտագործել կամ տիրապետել երրորդ անձի մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող հաճախորդի արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, եթե բավարարված են 9-րդ կետում նշված պայմանները և Ընկերությունն ունի հսկողության համապատասխան համակարգ, որն ապահովում է, որ միայն 9-րդ կետի 9.1 ենթակետի համաձայն իրենց համաձայնությունը տված հաճախորդների արժեթղթերն են 9-րդ և 10-րդ մասերով նախատեսված ձևով օգտագործվում:

11. Ընկերությունը պետք է վարի համապատասխան հաշվառում և գրանցումներ այն հաճախորդների վերաբերյալ, որոնց արժեթղթերն օգտագործվել են իրենց համաձայնությամբ և իրենց մատնանշած պայմաններով, ինչպես նաև յուրաքանչյուր հաճախորդի գծով օգտագործված արժեթղթերի քանակի վերաբերյալ: